ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 սեպտեմբերի 2024 թվականի N 334-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի N 78-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2024 թվականի օգոստոսի 29-ի թիվ 05/437 գրությունը

որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2024 թվականի մարտի 5-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների 2024 թվականին բնակչությանը վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները հաստատելու մասին» N 78-Ա որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Recoverable Signature

X

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2024թ. սեպտեմբեր 10
ք. Կապան